

Բնապատկերն ու էսթետիկական տեսքը



Ներկայիս վիճակը

Ամուլսար լեռը կազմում է Ջանգեզուրի լեռնաշղթայի մի մասը և բնորոշվում է գետերով առանձնացվող հովիտների կամ խորն ու կտրուկ թեքություններով կիրճերի միջև գտնվող հարթ, խոտածածկ մերկացած ապարներով տարածք:

Ծրագրի տարածքը ներառում է Հյուսիսային Էրատո, Էրատո, Տիգրանես, Արտավազդես և Արշակ լեռնագագաթները: Այս գագաթները ձևավորում են ապարների անհարթ մերկացումներով ենթալայյան գոտի, որն իջնում է դեպի ավելի հարթ բլուրներ: Այդ բլուրներից խոտածածկ լեռնադաշտերը վերածվում են հովիտների, որոնք տարածվում են դեպի Որոտան գետի լայն ու հարթ հովիտը արևելյան մասով, դեպի Սպանդարյան ջրամբարը հարավային մասով, իսկ արևմտյան մասով՝ բարձրավանդակների և նախալեռների միջով դեպի Արփա գետի գառիթափ կիրճը :

Հնարավոր խնդիրներն ու ազդեցությունները

- Ենթակառուցվածքների շինարարության արդյունքում տվյալ վայրի բնապատկերը ենթարկվելու է ազդեցության, իսկ Ամուլսար լեռան գագաթների առկա բնապատկերը փոխվելու է:
- Ամուլսար լեռան տեսարանը կրելու է վիզուալ փոփոխություն հանքի մոտակայքում գտնվող որոշ դիտակետերից, ինչը հիմնականում պայմանավորված է բացահանքերի, կույտային տարրավազման հրապարակի և դատարկ ապարների լցակույտի առկայությամբ:
- Վիզուալ ազդեցությունների են ենթարկվելու նաև Ջերմուկում գտնվող տարբեր տեղանքներ, Գնդեվազից հարավ գտնվող H-42 ճանապարհին ու Որոտան հովտի միջով անցնող երկրորդական ճանապարհիը:

Հնարավոր ազդեցությունների կառավարմանն ուղղված Լիդիանի քայլերը

- Հանքի փակումից հետո մնացող ենթակառուցվածքային տարրերը նախագծվել են այնպես, որ ապահովվի կառույցների վերջնական տեսքի համապատասխանությունը առկա շրջապատող բնապատկերին:
- Կառույցներն ու շինությունները հնարավորության դեպքում նախատեսվում է քողարկել առկա ռելիեֆով և բուսածածկ հողային բերմաներով, ինչպես նաև օգտագործել հնարավորինս քիչ լուսավորություն:

Հարատև ազդեցությունները

- Բնապատկերի փոփոխությունները տեսանելի կլինեն առավելագույնը 5 կմ հեռավորության վրա: Ազդեցությունների մեծամասնությունը կվերանան արդյունահանման աշխատանքներից հետո, ինչը պայմանավորված է շահագործման ավարտով և բնապատկերի վերականգնման միջոցառումներով:
- Հանքի փակումից հետո մնալու են հարատև վիզուալ փոփոխություններ, որոնք սակայն ժամանակի ընթացքում կդառնան պակաս ակնհայտ:

